

ՌՈՒՍԱՆՏ. ՍՈՑԻԱԼԻՍՏ. ՓԵՂԵՐԱՏԻՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏ.

Պրոլետարնե՛ր ըզլոր երկրներե, միացե՛ք.

ԵԱՂ. ԼԱԼԱ

Դուք հայրենիք:

ԵՐԿՈՒ ՄԱՀ

ՊԱՏԿԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵԿԱԿԱՆ ԴՈՐՇԵՐԻ ԿՈՄԻՍՍԱՐԻԱՏԻ

ՄՈՍԿՒԱ—1919

№ 30

891.99
Ը-14

19 NOV 2011

891.99-3

L-14

ԹԻՄՈՒՍ. ՍԻՅԱԼԻՍ. ՓԵՆՏՐԱՏԻ ԽՈՐՀՐԵԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏ.

u m.

Պրոկուրորն՝ Բ. Բոլոր ներկայների, մեղքէ՛ր.

ԵԱԳ. ԼԱԼԱ

1001
1728

ԵՐԿՈՒ ՄԱՀ



№ 30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՀԱԴՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՄԱՀ
ՄԱՍԻՍ — 1919

№ 30

ԵՐԿՈՒ ՄԱՀ

Պատկեր

I.

Անցել են շատ տարիներ այն սրտածմիկ անցքից յետոյ, որն ամբողջապէս տակն ու վրայ արեց իմ հոգեկան աշխարհը, քայքայեալ օրս էլ առանց արտասուների չեմ կարողանում յիշել այն տխուր դէպքը:

Գործավար էի Փ. ընկերութեան պէշմանքերում:

Գրասենեակս գտնուէր նույն գործարանի դիմաց, ուր առատութեից մինչեւ երեկոյ այնպիսի դժոխային համերգ էր կատարուէր, որ անսովոր մարդը մի րոպէ անգամ կանգնել չէր կարող, առանց գլխացաւի: Հարիւրատը միծ ու փոքր անիւներ կատաղի հարայ հրոցով ստոյտներ էին անում, կարծես մրցելով թէ իրենցից որն ամէկ արագ է շարժուի:

Ներքին մասում, երկունքով բռնած վիշապի նման տնքում էր դիւտաֆ-մեքենան կրակ ու ըոց հանելով ընթանից: Օծի պէս վշշաղ-նելով արագ սողում էր գործարանի մեջից ջրի առակը:

Ամբողջ գործարանը բռնած էր մեքենաների խիտ ցանցով. մարդիկ շարժուէր էին տախտակից շինած նեղիկ կամուրջների վրայով, որոնք ամբողջովին ծրարողում էին նաւթի եւ խոյի մէջ:

Յիշքի, հիշելու երկաթի թագաւորութեան մէջ, մի նեղիկ անցքում առակը երկու կողմերում որպէս մի եւ ջրի զանգաժից շինած անխելու մեքենաներ նստում էին մի քանի տասնեակ երեխաներ, աչքները ջրին յառած, իրենց ոսկրացած փոքրիկ թափիկ-

ներով չուրով էին պղծման քարից: Այդ մանուկները զաւիս էին մօտակայ հայ գիւղերից եւ իրենց դառն աշխատանքի համար ստանում էին ժամը 21¹2 կուս:

Մի օր նստած գրասենեակումս հաշտւաւ էի քանկոյնների ամսական ստանալիքները, մէկ էլ յանկարծ լսեցի գործարանի անժամանակ սոււնքի երկարատեւ ծայնը: Նա մարդկային լեզու առած, որդեկորոյս մօր նման, ողորմ էր սրտակտուր եւ աղիողորմ: Մերթ ընդ մերթ նրա ծայնը երբեք էր, կարծես արտասուծքները խնդրում էին նրա կոկորդը:

Ես անմիջապէս թողի ձեռքիս աշխատանքը եւ դուրս թուայ:

Դռն էր ամէն ինչ, էլ չէր լսում կատաղի համբոյզի դժոխային մեղիղիկների ծայնը: Ես շտապ քայլերով դմեցի գործարան եւ ներս մտայ:

Այն ի՞նչ պատկեր էր, որ քայցեց իմ առաջ: Երեխաները խելագարների նման այս ու այն կողմ էին վազում, լաց ու շիւմնով թնդեցնում էին գործարանը: Անիւններից մէկը ամբողջովին ներկւած էր բոսորային կարմիր գոյնով, իսկ տախտակէ կառուրջի վրայ ընկած էր մի 10—11 տարեկան փոքրիկ երեխայի դիակ առանց ոտքերի, ամբողջովին արիւնաշաղախ եւ յօշոտած: Թարմ մի մի քանի կոտորներ թափւած էին անիւի շուրս կողմը: Արիւնս ստոնց երակներումս եւ ես մի րոպէ քայքայածի պէս կանգ առայ: Տախտակէ կառուրջը ոտքերիս տակից գնում էր, աչքերս սեւանում էին եւ ես վայր կընկնէի անսպասման, եթէ ինձ չսթափեցնէր մերկնայապատի ծայնը.

— Պ. գործավար, երեխան դեռ չեղած է, հարկաւոր է անմիջապէս բժշկին յայտնել, ասաց նա դողդոջուն ծայնով:

— Ետտ լաւ Մեկըն, ես այս րոպէիս հեռախօսով կ'այտնեմ, պատասխանեցի ես եւ դիմեցի դէպի գրասենեակը:

Բժիշկը ապրում էր մեզներից մի վերստ հեռախօսիկի վրայ գտնուող Պ. գիւղում, որտեղ գտնւում էր եւ Փ. ընկերութեան հիւանդանոցը:

Սա մի նորաստեղ երիտասարդ էր. անփորձ եւ վերին աստիճանի ծոյլ մարդ: Միքում էր ամբողջ ցեղեկը բնել, իսկ գիշերները անցկացնել ակնբանցի կանաչ սեղանի շուրջը: Բացի թղթախաղից եւ նրա մասին խօսելուց, ուրիշ ոչնչով չէր նետաքրքրւում:

Մտնալով հեռախօսին, բժիշկի սղախինը յայտնեց ինձ, որ նա բնած է:

Ես ասացի, որ անհրաժեշտ է իսկոյն եւ եթ զարթեցնել եւ խնդրել հեռախօսի մօտ, քանի որ գործարանում անբախտութիւն է պատահել:

Աղախինը թողնելով հեռախօսի խողովակը եւ ինդրելով, որ ես սպասեմ, ինքը գնաց արթնացնելու իր պարոնին:

Բաւական երկար սպասեցի. բժիշկը չէր մօտնում հեռախօսին, համբերութիւնս հատնում էր, չգիտէի ինչ անել: Մէկ էլ հեռախօսը ուժեղ կերպով զանգահարեց. երեսում էր, որ խօսողը շատ վրդովւած էր: Ես վերցրի խողովակը: Բժիշկը իմանալով իրեն անհանգստացնելու պատճառը, սկզբում մի լաւ բոլանց, որ մենք ամէն էլ հայվաբաներ ենք եւ է՛ն գոազուով լսկիւններն էլ աւանակների ճոտեր, որ գնում բոռի պէս ընկնում են ատամնաւոր անիւների բերանը եւ հրամայեց որ այդպիսի դէպքերում իրեն անհանգիստ չանեն, այլ վշտաւածին դնեն կտոր, բերին հիւանդանոց եւ յանձնեն Ֆելուշէր Սիմէոնին. իսկ նա իր անելիքը գիտէ:

Ես վերադարձայ գործարան: Զնազկն բազմութիւն էր հաւաքել. այնտեղ էր եւ հանքի կառավարիչ ճարտարապետ Ստեփան բէկը:

Սա մի բարձրասակ միջին տարիքի գեղեցիկ տղամարդ էր. վերին աստիճանի պահանջատ, գործին նման եւ ծլատ:

Հէնց որ ինձ տեսաւ, իսկոյն հաջցրեց.

— Հը՛, բժիշկը զաւիս է՛, խօսեցի՞ր հետը.

— Այո՛, պատասխանեցի ես, քայց բժիշկը պարոն կառավարիչ քարկացաւ վրաս, որ համարձակեցի անհանգիստ անել իրեն...

— Դաւիթն է՞ թէ ոչ, հարցիս պատասխաններ, խօսքս կտրեց Ստեփանն Բէկը:

— Աէ՛ր զաւիս, պատասխանեցի ես:

— Շուտով պէտք է մի բան անել, այսպէս թողնել անկարելի է, իզուր տեղը գործարանը կանգնել է, ժամանակը ամառն է, պէտք է շահագործել: Բա՛խշի, դիմեց նա հանքերի ծխալանին, իսկոյն մի ծի վերցրու, գնաց բժշկի յետեւից եւ ասա որ անմիջապէս գայ, հասկացա՛ր:

— Հասկացայ աղա, պատասխանեց Բախշին, բայց զո՞նք բացի ձեր եւ Փաղէյ Մարտինիչի ծիւց ուրիշ ոչ մի ծի չկայ, բոլորն էլ գործի են գնացել:

Կառավարին իր ծին ոչ որի չէր թողնում նստելու, իսկ Փաղէյ Մարտինիչի ծին սեփական էր:

— Դա՛, մի փոքր մտածեց Ստեփանն Բէկը, ուրեմն ծի չկայ, որ այդպէս է կարգադրէր պատգարակ բերելու ս. գործավար եւ տղային ուղարկէր հիւանդանոց:

Ես երկու բանտրներ ուղարկեցի պատգարակ բերելու:

Երեխան սարսափելի ջղաճգութիւններ էր կատարում. արիւնը ծորում էր նրա վերքերից. ջրթոնքները սպիտակել էին: Աչքերը կիսախուփ, քերանը բաց նա հագիւ նկատելի կերպով շնչում էր: Մահը իր ցուրտ ու սեւ թւիւրը նետգնտէ փռում էր յօշոտած ու տրեւարում դիակի վրայ:

Բոլորս էլ լուռ էինք, ոչ ոք կարծէր չէր համարձակուի խանգարել երեխայի կեանքի վտրշին րոպէները: Միայն Ստեփանն Բէկի շունն էր ուրախ-ուրախ վազվզում մահաբեր անիւի շուրջը, լեզուով նրա շրթ կողմն թափած կարմիր նեղովը:

Մահուովը բացեց իր նազած աչքերը, մի հայեացք ձգեց մեր վրայ, լեզուով մի ընչոր բան դուլաջեց եւ յարիտեան լռեց...

Բոլորիս աչքերին էլ արտասուներն երկացին...

— Դիակը շուտ դուրս տարէր, ընդատեց տիրող լուսթիւնը Ստեփանն Բէկը, դու էլ, դիմեց նա մեքենայատէրին, իսկոյն գործարանը գործի ձգիր, շուտ էլ մի ուշացնէր:

Դիակը անմիջապէս դուրս տարան:

Երեխաները նորից կարգով շարանցին առակի երկու կողմերով. մնացած մարդիկ էլ ննդան իրենց գործին:

— Պարոն Ներսիսեան, դիմեց Ստեփանն Բէկը ինձ, շատով դուրս կգրէր 1000 րուբլի մեծնորի համար, թէ չէ ծնողները կզան գահլա կամենն. դրանցից, բացի վնասից ու օգուտ չկա՛յ, կաժողոք դէմքը Ստեփանն Բէկը եւ մի արհամարական հայեացք ձգեց փոքրիկ մանուկների վրայ, որոնք այս դէպքից յետոյ ամէկի էին կուէ եկել ու փոքրացնէ:

Մեր հանքերում հազար րուբլի էր գնահատուած մարդկային կեանքը:

II.

Նորից լսեց գործարանի ուղափոխ սուղոցի ձայնը: Դիւնամո-մեքենան անբաց եւ ալգ անբոցի հետ նայն տկնթարթում լսեց մի սուղ փի: Բոլորս էլ օտուած մնացինք. դարձեալ մի նոր զո՛հ, անցաւ մեքենայ եւ ինքնաբերաբար երեսո դարձրի երեխաների կողմն. նրանք աղբէն լեզապատուտ վեր էին ցատկել իրենց տեղերից եւ իրար էին նայում:

— Կանգնեցրու մեքենան, զօռաց Ստեփանն Բէկը, դիմելով մեքենայատէրին, դարձեալ 1000 րուբ. կատարեալ խաթարաւայ դարձած էս շուն տեղանները, խոսեց նա բարիացած եւ մի քանի քայլ առաջացաւ գէպի ձայնի կողմն:

— Վա՛յ ի՞մ Եսարթ, ի՞մ սկրուն շուն. զօռաց Ստեփանն Բէկը, շուտ դուրս տար, զնուցէր անասնաբուծի յետեւից, ինչ է՞ք կանգնել օտուցի պէս, չէ՞ որ կենդանին օտակում է:

Մի քանի բանտրներ մեծագոյն ժամն եւ մեքենայի տակից դուրս քաշեցին տրիմուկայ շանը: Նո օտնում էր լեզուն դուրս

համաձ, մտքին տեղ-տեղ պղծված էր եւ երեսում էր կարմիր միջը.
ոտքի մէջը չկար, գլխի վրայ երեսում էին մի քանի խոր վէրքեր:

Մեզնից ոչ ոք չէր նկատել, որ շունը գտնուում է զործարանի
շենքերի մասում:

— Պարոն կառավարիչ, զոհիմ' ծի չկայ բոլորն աշխատանքի
են գնացել, կմկաց ծիսական Բախչին:

— Ի՞նչ, ըդանց Ստեփան բէկը, ապա իմ' ծին, Փաղէյ Մար-
տիրոսիչինը նրանք ծիեր չե՞ն, Ի՞նչ եւ գլխիցը դուրս տալի չորան,
խաղոյն վերցուր երկուսին էլ եւ գնայ անասնաբուժի յետեւից, շո՛ւտ,
մի քանի րոպէից յետոյ այստեղ լինես:


— Շատ բարի, ասաց ծիսականը եւ արագ դուրս թուա:

— Զուր բերէք, կանչեց Ստեփան բէկը. գրասենյակից բերէք
ամբողջ դեղատարներ, շուտ էլ մի կանգնէք, եւ կուսնալով շան վրայ
սկսեց նրան փաղաքել ու գուրգուրել:

Շան ծայնը հետգնտէ նազում էր, աչքերը լցում էին ար-
իւնով եւ խամրում: Նա սարսափելի կերպով տանջւում էր եւ սոս-
կալի, սրտամորմոք կերպով կողկոնծում:

Մինչ բժիշկը կգար, դեղերը կբերէին նա մի քանի ցնցումներ
արեց եւ անշնչացա:

Մենք բոլորս էլ լուռ էինք, վախնում էինք ծայն ճպոտ
հանել, որովհետեւ բէկը այդպիսի րոպէներում կատաղի էր եւ չար:
Գառավարիչը նայեց շան վրայ բաւական երկար, վերցրեց նրա
գլուխը ձեռքերի մէջ եւ բէկի աչքերում երեւացին երկու խոշոր
արտասուքի խափիւններ...



ՀՀ Ազգային գրադարան



NL0349150

33179